

մանաւանդ՝ զճաշակումն¹ կերակրոց անխտրապէս զկնի հաղորդելոյ նոցա ի մարմին² եւ յարիւն³ Տեառն, եւ ապականեսցեն⁴ գլխովին զամենայն պահս Քառասնորդացն: Եւ դարձեալ, զի մի՛ խափան լինիցի⁵ ազատութիւն⁶ Զատկին, այսինքն⁷ աւր աւետաբեր Յարութեանն⁸, յորում պատմի զենումն գառինն անարատի երբաւրեայ⁹ Յարութեամբն, զի ի¹⁰ Մեծ հինգշաբաթին¹¹ նուիրի մարմին եւ արիւն Որդւոյն¹² Աստուծոյ մեզ ի փրկագործութիւն, եւ սպաւորէ զպատկեր հացին ինքեամբ, եւ անուանէ զնա¹³ հաց կենաց, եւ կոչէ մարմին¹⁴ իւր եւ արիւն¹⁵, եւ իւր ընտրելոցն տայ¹⁶ զինքն կերակուր, եւ աշակերտաւքն մեզ¹⁷ պատմի լինի, եւ առ յապա¹⁸ արիւնակ, եւ¹⁹ հնոյն կատարումն, եւ նորոյս սկիզբն, պատուիրէ երկոտասանիցն²⁰, աւելով²¹. «Զայս արարէ՛ք առ իմոյ յիշատակի²²»: Եւ յարհնելն²³ ճաշակէ ինքն՝ Աստուա-

ծորդին, եւ ինքեամբ կերակրէ զերջանիկ աշակերտսն, եւ մատնչին²⁴ առեալ՝ արտաքս ելանէ:

Ի դարձողաց հաւատացեալ ժողովրդոց, որ ի Տէր Յիսուս Քրիստոս, ո՛չ հպեալ յայս խորհուրդ կենաց առ ի ճաշակել, եւ ո՛չ ի լուր երաստիցն²⁵ պատմութեան երաստիցն²⁶ խորհրդոյ ուրուք ի գոեհկանացն²⁷ հասեալ եւ²⁸ հասու եղեալ այսմ խորհրդոյ մեծի Զատկին: Յայս արիւնակ եւ մեք տրոհեալ որոշեմք զժողովուրդն ի սուրբ խորհրդոյ Մեծի հինգշաբաթին²⁹, զի թէպէտ եւ փրկագործութեան կատարի խորհուրդն, այլ ազատութիւն երախայիցն³⁰ չեւ³¹ եւս է կատարեալ, բայց ի թարգմանութեան³² նստելով քահանայիցն, պատմի լինելով ժողովրդեանն եւ հրաւիրելոցն զազատութիւն խոստանալով³³, իբրեւ Աստուածորդին³⁴ իւրայոցն, նոյնպէս եւ քահանայն իւրոյ հատին:

Եւ դարձեալ եւս, զի թիւ³⁵ պահոց Պասեփին չեւ եւս կատարեալ, եւ լուծումն ազատութեան չեւ եւս³⁶ եղեալ է ի ծառայութենէ մեղսածին ախտիցն, յորում լինի թողութիւն ծառայից, գեաւղից³⁷ եւ պարտուց, զի Տէր մեր Յիսուս Քրիստոս չեւ եւս խաչեալ եւ զմահ լուծեալ եւ անարգեալ, եւ ո՛չ ի գերեզմանի եղեալ, եւ ո՛չ երբարեայ³⁸ Յարութիւնն³⁹ ի մեզ ցուցեալ,

1 ae զճաշակս իմն փխ զճաշակումն (ii,m) (ճիշտն ընդունուած է արդէն Հ. Ն. Պողարեանի տպագրում, թէպէտ եւ ստանց յղման):
 2 aii, մարմնոյ, m մարմն փխ մարմին (e)
 3 a յարեմէ, ii,m արեան փխ յարիւն (e)
 4 aii,m ապականեցիս փխ ապականեսցեն (e)
 5 aii,m լիցի փխ լիցի (e)
 6 ii,m ազատութեան փխ ազատութիւն (ae)
 7 e չիք այսինքն (aai,m)
 8 e Յարութեան փխ Յարութեանն (aai,m)
 9 ai ետարեայ, i, էրարեա m ետարեա փխ էրարեայ (e) (ստորեւ այս ընթերցումն եւ տալիս նաեւ միւս գրչագրերը. տե՛ս էջ 125, ծան. 13):
 10 e չիք ի (aai,m)
 11 e Ե-շաբաթիս փխ հինգշաբաթիս (aai,m)
 12 ii,m Որդոյն փխ Որդւոյն (ae)
 13 i,e չիք զնա (aim)
 14 i, յանապականն փխ եւ կոչէ մարմին (aeim)
 15 e եւ արիւն իւր փխ իւր...արիւն (aai,m)
 16 i,m ընդերեւոցն տա փխ ընտրելոցն տայ (aei)
 17 m ձեզ փխ մեզ (aeii,)
 18 ii,m յառ ապա փխ առ յապա (ae)
 19 e չիք եւ (aai,m)
 20 i,m երկոտասանիցն
 21 e չիք ստելով (aai,m)
 22 e-ի լուսանցքում Աշտուած է նաեւ այս սուրբալիս մէջքերման տեղը՝ Ղուկ. 22.19:
 23 im արհնելն փխ յարհնելն (aei,)

24 ii,m մատնչին փխ մատնչին (ae)
 25 aii,m չիք երաստիցն (e)
 26 a երախայիցն, i էրաստիցն փխ երաստիցն (ei,m)
 27 i գոեհկանաց / i, գոեհկանացն
 28 e չիք հասեալ եւ (aai,m)
 29 e Ե-շաբաթի փխ հինգշաբաթիս (aai,m)
 30 i երեխայիցն
 31 m չէ փխ չեւ (aeii,)
 32 e թարգմանութիւն փխ թարգմանութեան (aai,m)
 33 m խոստովանելով փխ խոստանալով (aeii,)
 34 e զԱստուածորդին փխ Աստուածորդին (aai,m)
 35 e գթիս փխ եւս...թիս (aai,m)
 36 e չիք կատարեայ, եւ...եւս (aai,m) (տե՛ս եւս...եւս)
 37 aii,m գեւղից փխ գեաւղից (e)
 38 ai ետարեայ, i, էրարեա, m ետարեա փխ էրարեայ (e)
 39 aii, զՅարութիւնն փխ Յարութիւնն (em)